Հրատարակվում է չորեքշաբթի, ուրբաթ և կիրակի օրերը։
Տարեկան գինն է 10 ռուբլի, կէս տարուանը 6 ռուբլի, 3 ամսուանը 3 ռ. և մի ամսուանը 1 ռ.
Առանձին համարը 7 կոպէկ։

Բաժանորդագրութիւնն ընդունվում է խմբագրատանը և Կենդրոնական գրավաճառանոցում։

Հասցէն՝ Тифлисъ, Редакція „Ардзаганкъ".
կամ՝ Tiflis, Rédaction „Ardzagang".

ԱՐՁԱԳԱՆՔ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

[...]թիւնը բաց է ամենայն օր 10—1 ժամը (բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

„ԱՐՁԱԳԱՆՔԸ“ ՆԵՐԿԱՅ 1893 ԹՈՒԻՆ

„ԱՐՁԱԳԱՆՔ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

(ՏԱՍՆՈՒԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

Ներկայ 1893 թուին «ԱՐՁԱԳԱՆՔԸ» հրատարակվում է այժմեան գիրքով և նոյն ծրագրով։ Թերթը ստանում է «Հիւսիսային գործակալութեան» հեռագիրներ։

«Արձագանքը» լոյս է տեսնում շաբաթը երեք անգամ—չորեքշաբթի, ուրբաթ և կիրակի օրերը։

«ԱՐՁԱԳԱՆՔԻ»՝ տարեկան գինը 10 ռուբլի է, կէս տարուանը—6 ռ., երեք ամսուանը—3 ռ. և մի ամսուանը—1 ռուբլի։

Բաժանորդագրութիւնն ընդունվում է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Երևանեան հրապարակի և Միջի-Փողոցի անկիւն, քաղաքային տան հանդէպ) և ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ։

«ԱՐՁԱԳԱՆՔԻՆ» օտար քաղաքներից գրուել ցանկացողները պէտք է դիմեն հետևեալ հասցէով՝ Тифлисъ, Редакція газеты «Ардзагангъ». իսկ արտասահմանից՝ Tiflis, Rédaction du journal arménien «Ardzagang».

Յայտարարութիւններ ընդունվում են թէ՛ հայերէն և թէ օտար լեզուներով։

Խմբագիր-հրատարակիչ՝ ԱԲԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Թիֆլիզի Քաղաքային Խորհրդի իրաւասուների ընտրութիւնը։

Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան Ընդհանուր Ժողովը։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.— Պակասորդ իրաւասուների համար նոր ընտրութիւն։ Մամուլի առաջարկած և ընտրուած իրաւասուների թիւը։ Գաղտնի խորհրդական Մ. Սաճառուն-Ղամազեանի մահը։ Գիւղատնտեսական բարձրագոյն դպրոցներ։ Ծխական եկեղ.-դպրոցներ ուսուցչական և գիւղատնտեսական դասընթացներով։ Ապագայ հայ դերասանական խումբ։ Ն. Կ. Բ. Մեծ իշ. Գէորգի Ալէքսանդրովիչի ժամանումը Աբասթումանի։ Քութաիսի պ. Նալբանդեան։ Նամակ Շուշուց։ Նամակ Բաքուից։ Նամակ Դուշէթից։ Թելաւից։ Կաթողիկոսի հրամանով 1891 թուի ընտրուած եկեղեցական պատգամաւորները։ Օր. Վ. Յակոբեանի դասախօսութիւնը։ «Նախշիրա» կոչուած ընկերութեան տնօրէնի ընտրութիւն։ Քաղաքային Վարկի Ընկերութեան Ընդհանուր Ժողովի յետաձգումն։

ՓԵԼԻԵՏՕՆ.— Երգիչ։ Աշոտ Երկաթ։
ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՀԵՌԱԳԻՐՆԵՐ
ԶԱՆԱԶԱՆ
ՏԵՂԵԿԱՏՈՒ
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻԶԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԻՐԱՒԱՍՈՒՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

Կիրակէ, մայիսի 16-ին, Արքունական Թատրոնում տեղի ունեցան 1893—1897 թ. թ. չորսամեակի Թիֆլիզի քաղաքային խորհրդի իրաւասուների ընտրութիւնները։

Ճիշդ $9^1/_2$ ժամին ընտրողական ժողովի նախագահ իշխ. Նիկողայոս Արղութեան-Երկայնաբազուկը նիստը բաց արաւ բացատրելով այն օրէնքները, որոնք վերաբերում են ընտրութեանց։ Այնուհետև քարտուղարը կարդաց այն անձանց ցուցակը, որոնք համաձայնութիւն էին յայտնել իրաւասու քուէարկուելու։

Նախագահը հարց առաջարկեց ժողովին թէ արդեօք համաձայնութիւն յայտնածները բոլորն էլ ցուցակագրուած են և թէ չկա՞ն արդեօք այնպիսիք, ոլոնք կամենում են այժմ հրաժարուել։

Իշխ. Բէգթաբէգեանը և պ. Նուբովը խնդրեցին որ իրանց քուէտուփերը չդնուին։

Ապա սկսուեցաւ քուէարկութիւնը, որին մասնակցեցին 936 անձինք։ Կատարեալ կարգ էր տիրապետում բոլոր գործողութեանց մէջ։

Առաջ ենք բերում 72 ընտրուած իրաւասուների ցուցակը ըստ աւագութեան՝ ստացած քուէների. քուէարկութեան ենթարկուածների թիւը 173-էր.

1) Իշխ. Նիկողայոս Արղութեան-Երկայնաբազուկ, Թիֆլիսի քաղաքագլուխ . . . . 805 քուէ։
2) Պօղոս Իզմայլեանց, քաղաքագլխի օգնական . . . 721
3) Իշխ. Պօղոս Արղութեան-Երկայնաբազուկ, քաղաք. խորհրդի քարտուղար 706
4) Դաւիթ Օրբելի, բժիշկ 664
5) Միքայէլ Թամամշեան, կառավարիչ Առևտրական բանկի 663
6) Աղէքսանդր Փրիդոնեան, սեղանաւոր 661
7) Պետր Ալեքսէյեվիչ Օպոչինին, երդ. հաւատարմատար . . 661
8) Տիգրան Ենֆիաճեանց, ինժեներ 657
9) Գրիգոր Եարալեանց, ինժեներ 656
10) Ստեփաննոս Անանեան, բըժշկապետ 653
11) Գէորգ Եւանգուլեանց, երդուեալ հաւատարմատար . 649
12) Կոնստանդին Ալիխանեան, կանդիդատ իրաւաբանութեան 648
12) Եգօր Դաւթեան, վաճառականների աւագ 647
14) Միքայէլ Շահ-Պարոնեանց, բժշկապետ 644
15) Քրիստափոր Վերմիշեան, գիւղատնտես 644
16) Մարկոս Պոլուխեան, քաղաքագլխի նախկին օգնական 643
17) Դաւիթ Ղորղանեան, հաշտարար դատաւոր . . . 634
18) Միքայէլ Աւթանդիլեան, բըժշկապետ 633
19) Գէորգ Բաբեան, բժշկապետ 628
20) Միխայիլ Վիկտորովիչ Լունկեվիչ, բժշկապետ . . . 622
21) Նիկողայոս Փրիդոնեան, վաճառական 618
22) Միքայէլ Պոլուխեան, գրնդապետ 614
23) Լուարսաբ Մելիք-Բեգլարեանց, պետական խորհրդական . . 608
24) Աւետիք Բաբայեան, բժշկապետ 606
25) Ֆրիդրիխ Վեցել, գործարանատէր 600
26) Աղէքսանդր Մատինեան, նախկին քաղաքագլուխ 599
27) Յարութիւն Տուրինեան, նախկին դեղավաճառ . . . 595
28) Յովհաննէս Ղորղանեան, տրամվայի արտօնատէր . . 593
29) Մկրտիչ Կարապետեան, տեխնոլոգ 591
30) Պօղոս Մելիք-Ղարագեօզեան, նահանգական դատարանի նախկին անդամ և նոտար 590
31) Յովհաննէս Ալիխանեան, լեռնային ինժեներ 588
32) Վասիլի Արկադիեվիչ Բօլգարսկի, զինուորական ինժեներ . 585
33) Իսահակ Բուղդանեան, վաճառական 585
34) Յովհաննէս Տովիանեան, սեղանաւոր 583
35) Նիկողայոս Խուդադեան, բըժիշկ 583
36) Յովհաննէս Մելիքեան, բժըշկապետ 580
37) Ֆրիդրիխ Օտտէն, մագիստրոս փարմացիայի 580
38) Աղէքսանդր Ռոտինեան, անտառապետ 579
39) Աբգար Յովհաննիսեան, հրապարակախօս 576
40) Աղէքսանդր Թամամշեան, հաշուապահ 565
41) Պլատոն Անտոնովիչ Գլավացկի, Կովկասի բժշկական վարչութեան կառավարիչ 564
42) Եակով Իվանովիչ Մալինին, բժշկապետ 551
43) Աղէքսանդր Մելիք-Ազարեանց, վաճառական 555
44) Գրիգոր Կիրակոսեան, ինժեներ 553
45) Դաւիթ Սարաջեվ, գործարանատէր 551
46) Յովհաննէս Ալիխանեան, հաշտարար դատաւորի օգնական . 549
47) Յարութիւն Վարդանեան, բժշկապետ 548
48) Բարսեղ Կանդուրալեան, տեխնոլոգ 512
49) Աղէքսանդր Այվազեան, կապալառու 541
50) Աբրահամ Բաբանեան, Փոխադարձ բանկի տնօրէն . . . 541
51) Իշխան Աղէքսանդր Արղութեան-Երկայնաբազուկ, հրապարակախօս 541
52) Գրիգոր Ղորղանեան, փոխ-գնդապետ 535
53) Աղէքսանդր Շահ-Ազիզեան, կալուածատէր 535
54) Նիկողայոս Գրիգորեան, ճարտարապետ 530
55) Գէորգ Տէր-Ասատուրեան, բանտիէ 528
56) Իշխան Աղէքսանդր Չելօկայեվ, հաշտարար միջնորդ . . . 526
57) Ապօլօն Աֆանասիեվիչ Իվանենկօ, քաղաքային վարչութեան անդամ 525
58) Գրիգոր Շահ-Բուդաղեանց, Առևտրական բանկի տնօրէն. . 524
59) Բարսեղ Ղորղանեան, սպայ 520
60) Յովհաննէս Թալիբեանց, գործարանատէր 514
61) Գրիգոր Քուչարեանց, բժշկապետ 511
62) Մարկիանոս Ռոտինեանց, բըժշկապետ 503
63) Նիկողայոս Խոսրովեան, երդուեալ հաւատարմատար և մանկավարժ 506
64) Իշխան Դաւիթ Աւալով, երդուեալ հաւատարմատար . . 505
65) Իշխան Եղիա Ճավճավաձէ, հրապարակախօս 498
66) Արշակ Բուղդանեան, բանտիէ 498
67) Անդրէյ Գէորգիեվիչ Պաշկեվիչ, փոխ-գնդապետ . . . 498
68) Նիկօլայ Դաւիդովիչ Զուբալով, հաշտարար դատաւոր. . 491
69) Գէորգ Յակոբեան, վաճառական 490
70) Գէորգ Տերեմէլի, կանդիդատ քաղաք. վարչութեան անդամի 481
71) Ալեքսանդր Իոսիֆովիչ Օդնօսումով, բժշկապետ. . . 479
72) Իշխ. Նիկողայոս Արղութեան-Երկայնաբազուկ, իրաւաբան . 475

ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Շաբաթ օրը, ամսոյս 15-ին, երեկոյեան 7 ժամին նշանակուած էր Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան ընդհանուր ժողովը։ Նիստը պէտք է տեղի ունենար Ընկերութեան «կարուձևի» դպրոցում, Սերգիևսկի փողոց, Բալանդուրեանցի տանը։

Ճիշդ 7 ժամին մտայ ժողովի համար որոշուած դահլիճը, որ մի քառակուսի փոքրիկ դահլիճ էր։

Վարչութեան համեստափայլ ներկայացուցիչներն արդէն իսկ ժամանել էին և սիրալիր ընդունելութեամբ առաջարկեցին ինձ թղթակիցների սեղանի առաջ մի աթոռ. բացի ինձնից այլ թղթակից չկար, երևի ամենքն էլ քաղաքային ընտրութիւնների տենդով բռնուած աւելի աշխոյժ ժողովներն էին նախադասել։

Անդամները՝ հետզհետէ սկսան բազմանալ, շուտով ժամանեց և ընդհանուր ժողովի նախագահը՝ Թեմիս ժամանակաւոր կառավարիչ բարեշնորհ Անանիա վարդապետը։

Ընդհանուր ժողովը կայացնելու համար դեռ շատ անդամներ էին պակաս, ուստի Վարչութեան անդամների վրան նկատելի էր արդէն տհաճութիւն. շուտ-շուտ լսվում էր՝ «ժողովը չի կայանալ», «երևի չեն գալ», «արդէն ուշ է»։ Բարեշնորհ նախագահը սակայն չէր յուսահատվում. նա յայտնեց, որ քանի ինքն եկել է մի անգամ, ուրեմն և համբերութիւն կ՚ունենայ մինչև վերջն սպասելու։

Յակամայից յիշեցի. «die Pünctlichkeit ist die Höflichkeit der Könige», սակայն «ոչ հայ կանանց» մտածեցի ես։

Վերջապէս լրացաւ անդամների թիւը, դահլիճում՝ արդէն 40-ից աւելի հոգի ներկայ էին, ուստի նախագահը զանգահարելով ժողովը բացուած յայտարարեց ժամը $8^1/_2$-ին։

Նախագահական սեղանի շուրջը տեղ բռնեցին Վարչութեան անդամուհիք, որոնցից միայն մէկը, տիկին Ոսկեհատ Տէր-Յովհաննիսեանն էր բացակայ հիւանդութեան պատճառով։

Նիստը բացուելուն պէս ընկերութեան ատենադպրուհի տ. Ս. Երիցեանը սկսաւ կարդալ Վարչութեան միամեայ գործունէութեան տեղեկագիրը։ Տեղեկագրից երևեցաւ, որ վարչութիւնը նախնթաց տարում ունեցել է 22 նիստ։ Վարչութեան անդամներից տիկին Ռոտինեանը բազմամեայ ծառայութիւնից յետոյ հրաժարուել է գանձապետուհու պաշտօնից, ստանձնելով «կարուձևի» դպրոցի ղեկավարութեան հետ նաև խոհարարական դասընթացի տեսչութիւնը։ Նախկին գանձապետուհու պաշտօնը վարում է այժմ օր. Մութաֆեանը։

Վարչութեան խնամքը նուիրուած է եղել Ս. Նշանի օրիորդական դըպրոցին և «կարուձևի» արհեստանոցին։ Ս. Նշանի դպրոցում այս տարի բացուել է ստորին նախապատրաստական դասատուն, ուր ընդունվում են անգրագէտներ։ Դպրոցն

ՖԵԼԻԵՏՕՆ

ԵՐԳԻՉ

Դու չես կարող, տգէտ ամբոխ,
Վերջ տալ երգչի երգերին.
Նա կենսաձիր վառ կայծեր է,
Որ թափում է աշխարհին։

Արշալոյս է սիրտը նորա,
Վառուած անթիւ ջահերով.
Թող վշտերով գերուած երկրին
Կեանք տայ եռուն երգերով։

Թող ներդաշնակ հետ բնութեան
Երգը երգէ սիրալից,
Եւ արտասուք աչքով՝ կաթը-կաթ
Քամէ սրտի կապարից։

Հոգի տայ քեզ սաւառնելու
Եզեմային ցնորքով,
Հանգիստ շնորհէ թախծոտ սրտիդ
Մեղմիկ, անուշ ձայներով։

ԱՐՇԱԿ ԹՈՒՄԱՆԵԱՆ

ԱՇՈՏ ԵՐԿԱԹ*)

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԷՊ

(913—928 թ.)

Առաջին մասն։

XI

Նազելի կոյսը չքնաղ դէմքով տխուր ու տրտում կանգնած է սենեակի մէջ և իւր արտասուալից աչքերը դարձրել է դէպի դուռը։ Տրտում ու տխուր է կոյսը, խորին թախիծը պատել է նրա սիրուն դէմքը և տխրութեան անշուք մէգը պատել է նրա անմեղ երեսը։ Հեռու այդ քողը. ինչ մէգ է, որ պատել է նրա դէմքը, ինչ վիշտ է, որ սառցրել է նրա դէմքի ուրախ ժպիտը, ինչ ցաւ է, որ ստիպում է նրան արցունքներ թափել, վշտանալ, տխրել, ցաւել ու տանջուել, երբ այդ հասակում պիտի միայն ժպտալ և ուրախանալ։ Ո՞ր անգութ ձեռքը կաշկանդեց նրան այդ սենեկի մէջ, ուր ամբարուած են թանկագին կերպասներն ու օթոցները, անգին զըմրուխտներն ու ակները, ոսկին և արծաթը, բայց ուր չկայ կապոյտ երկինքը և ազատ անուշ բուրմունքով օդը… Ո՜հ, նեղ է, շատ նեղ է այնտեղ, ուր չի լըսվում թռչունների անուշ ճռուողումը, առուակի ուրախ կրկչոցը, քամու սուգն ու շխշխանը, ամպի խաղն ու պարը… Եւ նազելի կոյսը տրտում ու տխուր էր, բանտարկուած լինելով Բագաւանի արաբաց իշխանի՝ Ահմէդի սենեակներից մէկում, ուր շրջապատուած էր աշխարհահայեին ամեն տեսակ բարիքներով ու վայելչութիւններով, բայց որոնք մազու չափ տխրեցնում էին կոյսին։

Նա յիշում էր իրանց գիւղը, որտեղից գերի էր վերցրել նրան Ահմէդը, և խոր հառաչում. նա մտաբերում էր իւր հօրն ու մօրը, փոքրիկ եղբօրը և քոյրիկին, և դառն արտասուքները խեղդում էին նրան… Նա յիշում էր իւր փոքրիկ եղբօր ճիղն ու աղմուկը, մօր սըրտնեղութիւնը, ապա գուրգուրմունքը, և նրա սիրտը յուզվում ու տակն ու վըրայ էր լինում, ախ, ինչպէս այն քաղցր էր, ինչպէս անուշ, իսկ հիմա ինչպէս տանջում են իրան այս ոսկին ու արծաթը, թանկագին կերպասն ու օթոցը, որոնցով շրջապատել է իրան Ահմէդը .. Ինչպէս դառն, սոսկալի և ատելի է այն շքեղութիւնը, որի վրայ չի կպչում մարդուս սիրտը, և ինչքան քաղցր է այն տանջանքն ու չարչարանքը, որ կրում է կամովին յանձնառու լինելուց։

Բայց կոյսը դողում է, և ամեն մի փոքրիկ շշունջ լսելիս փշաքաղվում է նրա մարմինը. նա սպասում է իւր դաժան տիրոջը, ահա ուր որ է ներս կը գայ և կը սկսուի իւր սոսկալի չարչարանքը… Րոպէներն անցնում են դանդաղ ինչպէս յաւիտենականութիւն, աշխարհս շրջեցնում է իւր անիւը, երկնքի աստղերը լուռ խոնարհվում են դէպի իրանց մուտքը, բայց դեռ Ահմէդը չկայ. ինչ կայ, ո՞ւր է նա. ախ երանի թէ յաւիտեան չգար և կամ շուտ բացուէր արշալոյսը…

Բայց ոչ, հեռուում ճրագ է երևում, այնտեղից լսվում է իւր տիրոջ խրոխտ ձայնը, այնտեղ է նա, որ անձնատուր է կէր ու խումի, չի անցնի կարճ ժամանակ և նա իւր դաժան տեսքով կը հանդիսանայ իւր առաջ։ Արդէն տեսնում է թէ ինչպէս բացվում է այդ դուռը, լըսում է Ահմէդի ոտքերի ձայնը, նա բաց է անում իւր սենեկի դուռը և կոյսը նայելով նրա վայրենի դէմքին մի ճիչ է արձակում և փռվում է գետին…

Մօտենում է Ահմէդը, իւր պինդ ձեռքերով գրկում կոյսին, համբուրում նրա մարմարիօնի նման սպիտակ շրթունքները և ուշքի բերում կոյսին։

—Զարթիր, նազելի կոյս, Եդեմի անմահ վարդ, ասում է նա ծունկ չոքած նրա ոտքերի տակ և շփում է նրա երեսը մի ինչ որ անուշահոտ ջրով։

Կոյսը բացում է իւր աչքերը և նայում է չորս կողմը. նա դեռ չի հասկանում թէ ինչ է կատարվում շուրջը. բայց երբ խելքը գլուխն է ժողովում, այն ժամանակ սառը մահուան դողը պատում է նրա մարմինը ու նա լուռ իւր հայեացքը իջեցնում է ցած։

—Իմ սիրելի, իմ անուշ վարդ, սիրիր ինձ և ապրիր ինձ հետ երջանիկ կեանքով, ես քեզ թագուհու նման կը պահեմ, ադամանդներով կը շրջապատեմ ճակատդ, թանկագին բեհէզներ կը հագցնեմ քեզ, ասում է Ահմէդը բռնելով կոյսի ձեռքը, որ աշնան տերևի նման դողում է։

Կոյսը ձայն չի հանում և միայն մի խոր յոգոց է հանում։

—Թող քո անօրէն հաւատը և ընդունիր մեր ճշմարիտ կրօնը, այն ժամանակ մենք երջանիկ կը լինինք քան Բաղդատի ամիրան և մեր երջանկութիւնը կ՚օրհնէ մեծ մարգարէն Մահմէդը. ով կոյս քո առաջ եմ չոքած և քեզ եմ խնդրում, կատարիր խնդիրս և ուրացիր քո պիղծ հաւատը և սիրիր ինձ…

—Հեռացի՛ր ինձանից, պիղծը ձեր հաւատն է, ասում է կոյսը և նրա աչքերը շանթեր են արձակում։

Ահմէդը նայում է և նրան, նայում և խորը մտածում. նրա հոգու մէջ կռվում են կոյսի գեղեցկութիւնը և իւր կիրքը. ինչպէս կը տանէր նա պիղծ գեաւուրի այդ խօսքերը, եթէ կաշկանդուած չլինէր նրա գեղեցկութեամբ, ու նա կրկին և կրկին աղերսում է սիրել իրան և ուրանալ իւր հաւատը. այն ինչ կոյսը աւելի և աւելի ատելութիւն և արհամարհանք է ցոյց տալի։

Հատնում է Ահմէդի համբերութիւնը և տեսնելով որ աղերսանքն ու պաղատանքը ոչինչ ազդեցութիւն չեն ունենում կամակոր աղջկայ վրայ, հանում է սուրը և շողշողացնելով կոյսի հէնց կրծքի մօտ, ուր արագ տրոփտոփում է նրա կուսական անմեղ սիրտը—գոռում է.

*) Տես «Արձագանք» № 53.

ունի 91 աշակերտուհի, որոնցից 12 հոգի են աւարտել. սրանցից 8 հոգի «կարուձևի» արհեստանոց են մտել:

Վարչութեան հրաւէրով այս դպրոցում գծագրութեան դասերը ձրիաբար աւանդում է օրիորդ Կ. Ղուլիջանեանը:

Այս դպրոցի վրայ ծախսուած է 1892 տարեշրջանում 2170 ռ. 81 կ. այսինքն՝ իւրաքանչիւր սանուհու վրայ 23ռ. 85 կ. մինչ նախընթաց տարիներում այդ ծախսը հասնում էր 30 ռուբլու: Սրա պատճառն այն է, որ սանուհիներից առնուած տարեկան վճարը 5 ռուբլուց բարձրացրած է 6 ռուբլու:

«Կարուձևի» արհեստանոցն ունի ընդամենը 53 աշակերտուհի և 10 ազատ լսողներ: Արհեստանոցից աւարտել են անցեալ տարի 10 հոգի և 5 հոգի ստացել են վարպետուհու վկայագիր, իսկ հինգը օգնականի: Ձրջանաւարտներից 5 հոգի մնացին արհեստանոցում ամսական 5 ռուբլի ռոճիկով և պատուէրներից ստանալիք մի որոշ տոկոսիք ստանալու պայմանով:

Արհեստանոցի ծախքը հասել է 2800 ռուբլու, այսինքն 270ռ. անցեալ (1891) տարուանից պակաս:

Խնհարարական դասընթացն այս տարի կազմակերպուեցաւ տ. Վ. Ռոտինեանցի ջանքերով և չնայելով որ ընդհանուր ժողովը վճռել էր այդ նպատակի համար 300 ռ. դրամագլխից ծախսել, բայց այնքան յաջող եղաւ այդ ձեռնարկութիւնը, որ ընկերութիւնը ոչ մի կոպէկ չծախսեց իւր դրամագլխից և դասընթացի վճարները ծածկեցին ծախքերը:

Տեղեկագրի մէջ դեռ. թուած են բոլոր նուիրատուները և ապա ընկերութեան տուած նպաստները:

Ընկերութեան անդամների թիւը ևս աճել է նախընթաց տարում. աւելացել են 12 մշտական և 13 իսկական անդամներ:

Վարչութիւնը իւր տեղեկագրի վերջը շնորհակալութիւն է յայտնում այն անձանց, որոնք բարոյապէս և նիւթապէս նպաստել են ընկերութեան:

Տեղեկագրի մասին ոչ մի նկատողութիւն չարին համեստափայլ անդամուհիք, ուստի տիկին ատենադպրուհին սկսաւ կարդալ ընկերութեան տպագրուած հաշիւն ու նաև՝ կին տարուան արձանագրութիւնը:

Արձանագրութեան ընթերցանութիւնից յետոյ օրիորդ Կ. Մուշթաֆեանը կարդաց առաջիկայ (1893) տարուան նախահաշիւը, որ հետևեալն է.

ՄՈՒՏՔ

Մշտական անդամներից . .	200 ռ.
Իսկական անդամներից (170)	1020 »
Պարահանդէսից և այլն .	1800 »
Նուէրներից . . .	750 »
Տոկոսիք դրամագլխի . .	650 »
Ս. Նշանի դպրոցից մուտք.	400 »
Կարուձևի դպրոցից . .	850 »
Ընդամենը.	5670 »

ԵԼՔ

Ս. Նշանի դպրոցի ծախքը.	2174 »
Կարուձևի դպրոցի ծախքը.	2678 »
Մասնաւոր նպաստներ . .	500 »
Դիւանական ծախք. . .	10 »
Վարչութեան ծախք . .	100 »
Ընդամենը.	5462 »

Նախահաշիւը հաստատուեցաւ առանց որևէ նկատողութեան:

Վարչութեան անդամ օր. իշ. Արղութեանը խօսք խնդրելով դիմեց ընդհանուր ժողովին և բացադրեց, որ վարչութեան ջանքերը ուսուցչուհիք պատրաստել տալու նախընթաց տարի ապարդիւն էին անցել, որովհետև ցանկացող չէ եղել:

Այս խնդիրը լուսաբանելու համար կարդացուեցաւ այն յանձնաժողովի մշակած ծրագիրը, որ ընտրուած էր յատկապէս ուսուցչուհիք պատրաստելու միջոցների մասին խորհելու:

Ընդհանուր ժողովի անդամուհիներից տիկին իշխ. Թումանեանը և տիկին Ալիխանեանը (գանձապետ) ցանկութիւն յայտնեցին, որ վարչութիւնը միջոցներ ձեռք առնի այս տարի օգնելու հայ վարժուհիներին, որոնք կամենում են քննութիւն տալ և վկայագիր ստանալ:

Վարչութեան անդամուհիք տ. տ. Երիցեան և չ. Աւթանդիլեանց ընդհանուր ժողովին բացադրեցին մի առ մի իրանց այդ նպատակի համար ձեռնարկած միջոցները: Ընդհանուր ժողովը ճանաչելով Վարչութեան եռանդը, որոշեց թողնել այդ խնդիրը Վարչութեան բարեհայեցողութեան:

Վիճաբանութիւնների ընթացքում պարզուեցաւ, որ երկամեայ դասընթացքը շատ կարճ է գաւառացի ուսուցչուհիների համար, ուստի որոշուեցաւ դիմել հոգևոր իշխանութեան, որ հրամայէ դպրոցների հոգաբարձուաց իրանց դպրոցների քննութեան պատրաստուող ուսուցչուհիների ամսական ռոճիկները շարունակել մինչև դասընթացի վերջը:

Նախագահը խոստացաւ վարչութեան իւր կողմից ամենայն աջակցութիւն ցոյց տալ այդ գործում:

Այս վիճաբանութիւններից յետոյ կարդացուեցաւ խնհարարական դասընթացի դրամական հաշիւը, որից երևաց, որ Վարչութիւնը ոչ միայն չէ ծախսել նախահաշուով որոշուած 300 ռ., այլ բոլոր ծախքերն հանելուց և կարասիք գնելուց յետոյ մի քանի կոպէկ էլ արդիւնք է մնացել:

Տիկին Ս. Բաբայեանի առաջարկութեամբ ընդհանուր ժողովը իւր խորին շնորհակալութիւնը յայտնեց Վարչութեան եռանդուն անդամ տ. Վ. Ռոտինեանցին, նրա յօգուտ ընկերութեան անդուլ աշխատանքների և խնհարարական դասընթացքի այդքան յաջող ղեկավարութեան համար:

Օրակարգի խնդիրները սպառելով նախագահը նիստը փակեց ժամը 10½-ին:

Ն. [illegible]:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Աչքի առաջ ունենալով որ կիւրալէ օրուայ ժողովը ընդամենը 72 երեսփոխան է ընտրել փ ո խ ա ն ա կ օ ր է ն ք ո վ պ ա հ ա ն ջ ա ծ 80 ե ր ե ս փ ո խ ա ն ն ե ր ի, ուստի նոր ժողով է նշանակուելու, որ պէտք է ընտրէ 8 երեսփոխ. և 16 կանդիդատ:

* *

Ընտրուած 72 երեսփոխաններից ճիշդ կէսը այսինքն 36-ը ներկայումս էլ երեսփոխան են, իսկ 9-ը եղած են առաջուայ ժամանակները երեսփոխ.: Մամուլի յառաջարկած ցուցակից ընտրուած են 50 մարդ:

* *

Մայիսի 7-ին Պետերբուրգում վախճանուել է իւր 82 ամեայ հասակում մեր հայրենակից գաղտնի խորհրդական Մ ա թ է ո ս Ա ա հ ա ռ ո ւ ն - Դ ա մ ա ղ ե ա ն ց ը: Հանգուցեալը 58 տարի շարունակ ծառայել է արտաքին գործոց նախարարութեան մէջ: Յիսունական թուականների վերջերում նա միջնորդ է նշանակուած արտաքին գործոց նախարարութեան Պետերբուրգ ժամանած անգլիական մասնաժողովի մէջ՝ Պարսկաստանի և Թուրքիայի սահմանագլխների քարտէզը կազմելու համար: 1872 թուից նա կառավարում էր արտաքին գործոց նախարարութեան ուսումնարանական մասը. Նորա ղեկավարութեամբ են պատրաստուած ներկայիս համարեա թէ բոլոր դիպլոմատիկական գործիչները Ասիայում, Բալկանեան թերակղզում: Հանգուցեալը նաև մի տաղանդաւոր ռուսագէտ էր և վաթսնական թըւականների գրական շրջաններում եռանդուն մասնակցութիւն է ունեցել: Այս սակաւաթիւ տեղեկութիւնները քաղում ենք մայրաքաղաքի լրագըրներից. կ՚աշխատենք տպագրել այս պատուական մարդու մանրամասն կենսագրութիւնը:

Հանգուցեալը խնդրել է, ինչպէս երևում է լրագրների մէջ տպուած Դամաղեանի վերաբերեալ յայտարարութիւնից, ազգականներին և ծանօթներին, որ աղօթեն իւր հոգւոյ փրկութեան համար, բայց ոչ մի պսակ չդնեն իւր դագաղի վրայ:

* *

Այսօր, երեկոյեան 8½ ժամին, Թիֆլիզի ժողովարանում Բերնի համալսարանի փիլիսոփայութեան դոկտոր օր. Վ ա ր դ ո ւ հ ի Յ ա կ ո բ ե ա ն ը կարդալու է հայերէն լեզուով մի հրապարակական դասախօսութիւն, որի նիւթն է «Կրթութեան գործը և նորա պատմական զարգացումը»: Եկամուտի մի մասը յատկացրած է խօլերայի մասին բրօշիւրներ տարածելու գործին:

* *

Ներքին գործոց նախարարութիւնը, համաձայն առաջարկութեան օրթօդօքս սրբազան սինօդի պ. օբէր-պրոկուրորի, շրջաբերականով պատուիրել է Ռուսաստանի բոլոր նահանգապետներին, որ առաջիկայ սեպտեմբերին ամեն մի գաւառում բաց անեն երկու կամ աւելի ծխական-եկեղեցական դպրոցներ, ուսուցչական և գիւղատնտեսական դասընթացներով: Այդ դպրոցները պիտի պատրաստեն տարրական դպրոցների վարժապետներ:

* *

Մեր մամուլի վերջին ժամանակներս արծարծած միտքը, թէ հարկաւոր է առաջիկայ 1893—94 թ. [illegible] արձագանք գտաւ հասարակութեան մէջ: Հայ թատրոնասէրները մի քանի անգամ խորհրդակցելուց յետոյ մայիսի 15-ին մասնաժողով ընտրեցին, որին յանձնարարեցին մի ծրագիր մշակել առաջիկայ թատրոնական սէզոնին դերասանական խումբ կազմելու համար:

Ընտրուած մասնաժողովի անդամները՝ պ. պ. Թամամշեան, Թաւադեան, Չմշկեան, Յովհաննէս Յովհաննիսեանի և Եղոյեան որոշել են համաձայն իրանց տուած յանձնարարութեան՝ մայիսի վերջին հրաւիրել թատերասէրների ժողով, որին առաջարկել՝ ընտրել մի թատերական կոմիտէտ հինգ անդամներից բաղկացած, որին և յանձնել նոր դերասանական խումբ կազմելու և ռեպերտուար մշակելու գործը:

Այդ կոմիտէտի գործունէութիւնը պիտի շարունակուի մի տարի, որից յետոյ նա նոյն թատերասէրներին պիտի հաշիւ ներկայացնէ:

Բացի այդ մշակում են մի քանի կանոններ, որոնցով պիտի ղեկավարուի ընտրելի թատրոնական կոմիտէտը:

* *

Նորին Կայսերական Բարձրութիւն Մեծ Իշխան Գէօրգի Ալեքսանդրովիչը մայիսի 13-ի երեկոյեան 5 ժամին Լիվադիայից վերադարձաւ Աբասթուման:

* *

Հայոց գեղարուեստական աշխարհի հորիզոնի վրայ բարձրանում է մի նոր աստղ, դա է ե ր ի տ ա ս ա ր դ ջ ո ւ թ ա կ ա հ ա ր պ. Ն ա լ բ ա ն դ ե ա ն ը: Յայտնի երաժշտական կրիտիկոս պ. Ռոպչոֆ, նկարագրելով «Ռ. Փ.» լրագրում, կանգ է առնում ջութակահարութեան պրոֆէսոր Աուէրի աշակերտների առաջադիմութեան վրայ և մեր հայրենակցի մասին ասում է. «պ. Նալբանդեանը՝ Վրյետանի դժուար կոնցէրտի կատարման մէջ ակնյայտնի ցոյց տուեց ապագայ պատուական ջութակահարի բոլոր յատկութիւնները, թէև այժմ նրան դեռ բաւական բան պակաս է»: Պ. Նալբանդեանը իւր ուսումը պիտի վերջացնէ եկող տարի և կրիտիկոսը այդ մասին ասում է, թէ անկասկած պրոֆէսոր Աուէր մի տարուայ մէջ կլրացնէ իւր ապագայ նշանաւոր աշակերտի բոլոր պակասութիւնները:

Պ. Նալբանդեանը Սիմֆերոպոլցի հայ է և հասակով տակաւին 20-21 տարեկան:

* *

ՇՈՒՇԻ, 10 մայիսի.

(Թղթակցութիւն «Արձագանքի»)

—

Այս օրերում, Ելիսաւէտպոլի նահանգի՝ Պարսկաստանին սահմանակից գաւառներում տեղւոյս վարչական իշխանութիւնը մի շատ նշանաւոր կարգադրութիւն արեց, որ չէ կարելի չընդունել մեծ շնորհակալութեամբ և գովեստով: Իշխանութեան կարգադրութեամբ այն բոլոր գիւղական հասարակութիւնները, որոնք յայտնի են իրանց խաղաղ կեանքով առաջարկուեցաւ ստանալ երկու-երեք հատ «այնալու» (արագաձիգ հրացան) անձի և կայքի պաշտպանութեան համար: Հարկաւոր է ձեզ հաղորդել, որ վերջին ժամանակներումս մեր կողմերում աւազակութիւնները շատացան և աւազակների խմբերն այնպիսի համարձակութեամբ են գործում, որ մարդ շուարած է մնացել: Այսպէս Ջանգեզուրի գաւառում Նարի աւազակապետի սխրագործութիւնները յիշեցնել տուին յայտնի Քեարիմ աւազակապետի աներկիւղ համարձակութիւնը: Հրացանները բաժանեցին այսպիսի եղանակով. ամեն գիւղի տանուտէր և պատուաւոր անձինք ստորագրութիւն տուին գաւառական ոստիկանութեան «պրիստաւներին», թէ ստացել են այսքան հատ հրացան և թէ պարտաւորվում են ամեն կորցրած հրացանի համար հատուցանել տուգանք, որի գումարը բաւական մեծ է: Թէև այսպիսի պայմանները շատ ծանր են ժողովրդի համար և մինչև անգամ մի քանի գիւղական համայնքներ կամենում էին հրաժարուել հրացաններ ընդունելուց, բայց կեանքի և գոյքի պաշտպանութեան կարիքն այնքան մեծ է, որ գիւղացիք շնորհակալութեամբ հանդերձ ստորագրեցին իրանց առաջարկած պայմանը: Զմռանանք, որ Շուշուայ և Ջանգեզուրի գաւառները սահմանակից են Պարսկաստանին և Տաճկաստանին և որ այն տեղերի մեզ դրացի բնակիչները և խաները ապաստարան են տալիս աւազակաց խմբերին: Այս տարուայ սկզբին Ելիսաւէտպոլու նահանգում բոլոր բնակիչներից՝ անխտիր թէ հանգիստ և թէ աւազակաբարոյ, խլուեցաւ «այնալու» հրացանները: Գուցէ այդ էր պատճառը, որ օրին. Մեղրիի գաւառակում անապահովութիւնը չափազանց մեծացաւ և որ վարչութիւնն ստիպուած տեսաւ իրան վերադարձնել զէնքը վերոյիշեալ եղանակով՝ հանգիստ և ազնուաբարոյ գիւղական հասարակութիւններին: Պ.

* *

ԲԱԳՈՒ, 16 մայիսի.

(Թղթակցութիւն «Արձագանքի»)

—

Վերջերումս Թիֆլիզում վախճանուեցաւ 60 տարեկան հասակում Թաւրիզեցի Ջաքարիա մահտեսի-Յարութիւնեան Թումանեանցը, որի դիակը ամսոյս 16-ին փոխադրուեցաւ Բագու, ուր հանգուցեալը, իւր Սարգիս, մահտեսի-Սիմէոն և Խաչատուր եղբարց հետ, վաճառականական յայտնի տուն ունի:

Բագւում այժմ եղած եղբայրներից մահտեսի-Սիմէոնը ի յիշատակ հանգուցեալի հետևեալ Աստուածահաճոյ նուէրներն արաւ.

1) Բագուայ հայոց Մարդ. Ընկերութեան մօտ պահուած այն ֆօնդին, որի տոկոսիք աղքատ աղջկերանց համար օժիտ է պատրաստվում . .	1000 ռ.
2) Ս. Երուսաղէմի հայոց վանքին . . .	500 »
3) Ս. Էջմիածնի ճեմարանին . . .	300 »
4) Բագուայ հայոց աղքատանոցին . .	500 »
5) Բագուայ հայոց օրիորդական դպրոցին. .	200 »
Գումարն է. .	2500 »
6) Թաւրիզի հայոց տղայոց դըպրոցին . .	200 պարս. թմն.
7) Թաւրիզի օրիորդական դըպրոցին . .	200 » »
8) Թէհրանի հայոց դպրոցին	100 » »
9) Մարաշի դըպրոցին . .	100 թուման
10) Ռաշտի դըպրոցին . .	100 » »
11) Արդավիլի դըպրոցին . .	100 » »

Գումարն է 800 պարս. թմն. կամ 2500 ռուբլի, որ միացնելով վերոյիշեալ 2500 ռուբլու հետ, ուրեմն ի յիշատակ հանգուցեալ Զաքարիա Թումանեանցի, նրա եղբարց նուիրած գումարը լինում է 5000 ռուբլի:

Եղիշէ [illegible]:

* *

ԳՈՒՇԷԹ, մայիսի 13.

(Թղթակցութիւն «Արձագանքի»)

—

Մայիսը,—բնութեան այդ գեղեցիկ ամիսը, ստիպուած ենք տան մէջ փակուած անց կացնելու: Անընդհատ անձրևներ են, որ շարունակ տեղում են: Արեգակի երես չենք տեսնում: Դաշտերը ծածկուած էին կանաչ զորգերով, սպասվում էր առատ հունձ, բայց յորդառատ անձրևները ի դերև հանեցին մեր յոյսերը:

Հեղեղները հազարներով վնասներ

—Կամակոր աղջիկ, մինչև երբ ինձ պիտի տանջես, մինչև երբ ինձ պէտք է չարչարես. ասա՛, ուրանում ես հաւատդ և սիրում ինձ թէ՞ ուզում ես որ այս սուրը մըխի կրծքիդ մէջ և լերդ ու թոքդ դուրս թափի...

Տիրում է լռութիւն, կոյսը աղօթք է մրմնջում. իսկ Ահմէդը կատաղի աչքերով պատասխան սպասում. այն ինչ այդ ժամանակ դուրսը, փողոցում վայնասուն և ճչի աղմուկ է լսվում: Բայց Ահմէդը ոչինչ չէ լսում, նա սպասում է պատասխանի, որ կամ սուրը մխէ նրա կուրծքը և կամ գգուի և համբուրի նրան...

—Լսում ես, ինչ եմ ասում. պատասխանիր, քո կեանքը քեզանից է կախուած, ընտրիր երկուսից մէկը, կամ մահը կամ անոյշ կեանքը:

—Մահն եմ ընտրում, անօրէն գազան, շուտ վերջացրու տանջանքներս, էլ ինչու ես ուշացնում, գոռում է կոյսը և արտասուքները լիառատ գլորվում են նրա աչքերից:

—Բայց ես քեզ չեմ կարող սպանել, ով աննման հրեշտակ, սուրը մի կողմն է քաշում Ահմէդը ապա ուզում է գրկել նրա նազելի մէջքը, բայց կոյսը հրում է նրան ձեռքերով և դուրս է պրծնում բանից: Ահմէդը կատաղում է, բարկութեան փրփուրը պատում է նրա բերանը և նա կայծակի նման սուրն առնելով վազում է կոյսի վրայ, այդ ժամանակ դուռը ճարճատելով գլորվում է ցած և երևում Աշոտ Երկաթ:

Կայծակնահարի նման կանգ է առնում Ահմէդը և նայում է իւր առաջը կանգնած ամդահոյ մարդուն, որի ձեռքին բռնած սրից կաթկաթում է արիւնը: Ո՞վ է նա և ինչպէս համարձակուեցաւ ներս մտնել և ո՞ւր են իւր զինուորներն ու պահապանները, մտածում է նա և յանկարծակի թռիչք անում դէպի Աշոտ Երկաթ:

Աշոտ Երկաթը ժպտում է դառն ժպիտով, որից հալւում է Ահմէդի մարմինը և դեռ իւր սուրը չբարձրացրած արիւնաթաթաւ գլորվում է գետին:

Այդ ժամանակ ներս են մտնում նաև մի քանի հայ զինուորներ, որոնց դիմելով Աշոտ Երկաթն ասում է.

Բագաւանում վերջին անօրէնը սատկեցաւ, ջնջուեցին նրանք, բայց լաւ ժամանակ հասանք, մի անմեղ զոհ ազատեցինք, ասաց նա և արիւնաթաթաւ սուրը պատեանը դրեց. . .

XII

Տխուր է Դաւթի հոգին. . .

Ուրախութեան ոչ մի ժպիտ չէ փայլում նրա երեսին, յուսոյ ոչ մի նշան չէ ուրախացնում նրան... Ամեն ինչ յուսահատ, ամեն ինչ տխուր է նրա համար: Չկայ իւր Աստղիկը, չկայ իւր հրեշտակը:

Գնում է Դաւիթը մի երեվարի վրայ նստած դէպի Վաղարշակերտ ու խոր մըտածում: Էլ ոչ մի բան նրա աչքին չէ գալիս, էլ ոչինչի վրայ չէ մտածում. նրա մտքերը կանգ են առել նրա գլխի մէջ և ոչինչ շարժողութիւն չեն ցոյց տալիս, կարծես նա զրկուել է դատելու ընդունակութիւնից: Նա անգիտակցօրէն իջնում է ձիուց, նրա սանձը ձեռքն առնում և դանդաղ քայլերով առաջ գնում: Ապա շեղվում է ճանապարհից և սկսում է ծաղիկներով ծածկուած դաշտի միջով քայլել, նա պոկում է դաշտի ծաղիկները, մէկ-մէկ ուշադրութեամբ դիտում, գլուխը շարժում և ապա միասեղ ժողովելով մի փունջ կազմում: Ո՞ւմ համար է կազմում երփներանգ ծաղիկների այդ փունջը, ո՞րի գլուխը պիտի պսակի դաշտի այդ ծաղիկներով,—յայտնի չէ:

Պոկեց նա մի ծաղիկ, որ արեան գոյն ունէր և խոր յոգոց քաշեց այդ ծաղկի անունը մտաբերելով: «Եօթն եղբօր կռան արիւն» էր կոչվում այդ ծաղիկը, այդ ասել էր նրան իւր Աստղիկը, որ այժմս չկար: Եօթն եղբայր արիւն էին թափել և այդ թափած արիւնից գոյացել էր այդ ծաղիկը, որ այնպէս սիրուն, այնպէս քնքուշ ծաղկում էր դաշտի մէջ:

Իսկ ինչ եղաւ իւր Աստղիկը, արդեօք նա էլ թողէլ է մի յիշատակ, մի ծաղիկ, և ո՞րն է այդ ծաղիկը. անշուշտ նա կարմիր արեան գոյն չի ունենայ, այլ բոլորովին սպիտակ, որ նշան է անմեղութեան: Անմեղութեամբ, անարատութեամբ նա երկինք կը լինի գնացած իւր յիշատակը թողնելով մի սպիտակ ծաղիկ, որ ինքը քաղի, հոտոտի և իւր կարօտը առնի..

Նա պտրտում է, պոկում է զանազան տեսակ սպիտակ ծաղիկներ, հոտոտում է նրանց, բայց ոչ մէկը նրան դուր չէ գալիս, և սրտնեղած դէն է շպրտում այդ ծաղիկները և յօնքերը կիտած շտապեցնում իւր քայլերը:

Նա մինչև անգամ չի նկատում թէ ինչպէս հետզհետէ ծածկվում է խաւարը և թէ ինչպէս հեռւում, լեռների թամբին կամաց-կամաց ծածկվում է բարակ եղջերաձև լուսինը... Օդը հետզհետէ ըսկսում է ցրտել, լռում է թռչունների ուրախ կրկչոցը, բզէզների և մրջիւնների աղմուկն ու ժխորը: Կենդանական թագաւորութիւնը լռում է, բուսականը հանգիստ քուն մտնում, երկինքը վառում իւր ճրագները. . .

Յանկարծ Դաւիթը կանգ առաւ, իւր առաջը խոխոջալով անցնում էր լեռնային մի վտակ, որ գոռում ու գոչում էր, ուժգնութեամբ զիպչում էր ժայռի կրծքին, փրփրում ու վազում առաջ: Դաւիթը գլուխը վեր բարձրացրեց և մի տեսակ դող անցաւ նրա մարմնով. այդ ո՞ւր է հասել և ո՞ւր էր Աշոտ Երկաթ իւր խմբով, որոնց հետ նա միասին գնում էր տակնուվրայ անելու Վաղարշապատը. . .

—Է.. հէ... այ քեզ ինչ է նշանակում մտքի հետ ընկնել, մրմռաց ինքն իրան, նորից ձին հեծաւ և դէպի գետի հակառակ ուղղութիւնը քշեց, առանց իմանալու թէ ուր պիտի դուրս գայ:

—Ե՞հ, հոգ չէ, որ ես յետ մնացի, ինչին եմ պէտք ես Աշոտ Երկաթին: Աստուած Հայաստանին մի այնպիսի առիւծ է շնորհել, որի առաջ ոչ մի արգելք չի դիմանայ: Խէղճ Իւսուֆ, Սմբատ արքային նահատակեց և կարծեց թէ Հայաստանին տէր դարձաւ, մոռանալով, որ նրա կորիւնը կարող է նրանից վրէժ առնել: Այդպէս էլ պէտք է, մինչև երբ այդ անիծուածները մեր արիւնը խմեն. վերջապէս մի օր հանգստութիւն է պէտք մեզ. այս ինչ է մեր օրը՝ որդին հօրը չէ գտնում, մարդը կնոջը, երէխայք չեն, գիւղը աւերակ, վանքերը քանդուած, եկեղեցիք պղծուած, խաչերն անպատուած.. Էլ Հայաստանում չմնացին սիրուն հարսներ ու կոյսեր, ամենքին գերի տարան: Ա՜խ, եթէ ես գիտենամ թէ ուր է իմ Աստղիկը, ես այս րոպէիս կը թռչեմ դէպի նա... Այդպէս մտածում էր նա, երբ հեռւում, մացառների և թփերի միջից երևացող ընդհատուող կրակի բոցը նրա ուշքը գրաւեց:

Կրակի բոցը երբեմն երևում և երբեմն հանգչում էր: Դաւիթը կանգնեցրեց ձիուն, սկսեց ուշադրութեամբ դէպի այդ լոյսը նայել: Ի՞նչ լոյս էր այդ լոյսը, քաջքերն էին վառել թէ՞ մարդիկ, և եթէ մարդիկ, այդ գիշերուան պահուն ինչ էին շինում այդտեղ և ովքեր էին դրանք: Մի շարք հարցեր, որ կայծակի նման անցան նրա մտքով: Նախ վախեցաւ քաջքերից ու երեսը խաչ քաշեց, բայց լոյսը կրկին երևում էր, խաչ քաշելը չօգնեց նրան, ուստի համոզուեց

հասցրին այն այգիներին, որոնք Դուշէթիսխեւի ափերին են գտնվում։ Այդ գետակն այնպէս վարարեց և սկսեց կատաղութեամբ հոսել, որ այգիների ցանկապատերի, մի քանի կամուրջներ ջուրը սրբեց տարաւ։

Այսօր, ամսիս 13-ին, Թիֆլիզի փոստը չստացանք, ինչպէս մեզ պատմեցին, նախընթաց կիրակի օրը Թիֆլիզից ուղարկուած փոստը կէս գիշերին դուրս է գալիս Մցխէթից, և հազիւ թէ երկու վերստ է անցնում, որ սայլակն ու ձիաները չդիմանալով լեռներից վազող ջրերին գոցեղ հոսանքին, սահում են և ընկնում Արագվա գետը։ Փոստային ուղեկիցն ու կառապանը ազատուած են, իսկ փոստային կապոցները դեռ գտնուած չեն։ Գաւառապետն արդէն ուղևորուեցաւ աղէտի տեղը։

Կենսական ամենաանհրաժեշտ մթերքները համեմատաբար թանգ են այստեղ. ալիւրը—փութը 1 ռ. 40 կ., թխած հացի գ՚ունտը 3-4 կ., տաւարի մսի ֆ. 9 կ., ոչխարինը—10 կ., իւղի ֆ. 40 կ., օսի պանրի ֆ. 20 կ., 5 հատ ձուն ծախւում է 5 կոպէկով։

Մայիսի 5—13-ը նահանգական դատարանի ժամանակաւոր սէսիան այստեղ էր՝ դատարանը կազմուած էր՝ նախագահող՝ պ. Բրօնիցկին, անդամներ պ. պ. Պարչևսկի և Եակուլեանց։ Վերջինս Դուշէթի հաշտարար դատաւորն է։ Քննած գործերի մեծ մասը վերաբերում է սպանութիւններին և յարձակումներին. ամսիս 13 ին հետաքրքրական գործ էր նշանակուած. պ. Եփրեմ Կօբիևը մեղադրում էր «Տիֆլիսկ. Լիստօկ» լրագրի աշխատակից պ. Դաւիթ Կեզելուն մամուլի մէջ զրպարտելու համար նրա փաստաբանական գործունէութիւնը։ Գործն ընդհատուեցաւ երկու կողմերի չներկայանալու պատճառով։

Աղը։

***

ՎՈՅՈՑ-ՁՈՐ, 5-ն մայիսի.

(Թղթակցութիւն «Արձագանքի»)

—

Անցեալ ապրիլի 30-ին, երեկոյեան ժամի 9, տեղւոյս գ՚պրիստաւ պ. Անդրէասեանցին իմաց տուեցին, թէ ութ հոգի աւազակներ Մամարզայ գիւղի կողմից իջնելով Բուլախլար գիւղի մօտ, փոքր ինչ հանգստացան այնտեղ և բարձրացան Թափասի Դալիկ լեռան ստորոտները։ Ուստի պ. պրիստաւը կարգադրեց, որ Դաբալագեազի բոլոր ճանապարհները, կամուրջները և անցքերը փակեն խիստ զգուշութեամբ և նկատելուն պէս պահապաններն իսկոյն տեղեկութիւն հասցնեն իրան. իսկ Քեշիշքեանդու հասարակութեան տանուտէրին հրամայեց գնալ յիշեալ տեղը ու գտնել աւազակների հետքը և ուղղութիւնը։ Միւս օրը առաւօտեան տեղեկութիւն հասցրին Ալագեազու ձորից, թէ աւազակախումբը լուսադէմին փոխելով ճանապարհը հանգիստ առան Գենդարեցի Ալի Գիւլմալի օղլու տանը և ստանալով նրանից ուղեցոյց, մտան Ալագեազու ձորը։ Ղաբախլու գիւղի մօտ յարձակուեցին նոցա վրայ բնակիչներից մի քանիսը, աւազակախումբը թողեց այդ միջոցին իրանց ձիերից մէկը Գիւնէյվանք գիւղի մօտ ու տեսնելով յարձակողների կրկնապատկուիլը մթութեան մէջ, կորցրեցին իրարու և բաժանուեցան երկու խմբի։ Առաջինը չորս ձիաւորից բաղկացած ուղևորուեց դէպի Ալագեազ, երկրորդը բարձրանալով աւերակ Գիւնէյվանքի մօտ թողեցին այնտեղ բեռնուած երեք աւելորդ ձիանները։ Յարձակւողները կորցրեցին նոցա հետքը, սակայն նորից ստուգեցին որ Ալագեազի տանուտէր Հուսէյնի որդին ինչպէս ուղեցոյց, Ալագեազի մօտից անցկացրեց նոցա դէպի Նոր-Բայազէտու գաւառը։ Այստեղից Ալագեազու հասարակութիւնը այժմեան տանուտէր Ալլավերանը էրտափենցի Օհաննէս Գէորգեանի հետ գտնելով նոցա հետքը, կրկին հետապնդեցին նոցա և հասան Գիւմուշբուլաղ անուանեալ տեղում, ուր սկսուել է փոխադարձ հրացանաձգութիւն։

Գ. պրիստաւի մօտ գտնուող մարդիկը ողջ ուղարկուած էին հարկաւոր տեղերը, նա հարկադրուած էր միայնակ գնալ, ուստի ես և ընկերս իբրև օգնական ուղեկից եղանք նորան ու սաստիկ արագութեամբ շտապում էինք Սէլիմի ճանապարհը փակել, բայց Քարագլուխ գիւղում մեզ իմաց տուեցին, թէ աւազակախմբերից մէկն արդէն անցաւ Նոր-Բայազէտու գաւառը, իսկ միւսը Հօբբագդ գիւղի թուրքերի շնորհէւ և օգնութեամբ բարձրացաւ ու գրաւեց անառիկ, ձիւնով պատած Բայալու բաշի լեռան բարձրութիւնը։ Կռուի ծաբաւով տանջուած, ոչ ձիանքի քըրտնքին, ոչ նոցա հևալուն ուշադրութիւն դարձնելով, ոտի տակ տուեցինք բոլոր բարձրութիւնները, երբեմն ձիանքից իջնելով, քշելով նոցա առջևներիցս, երբեմն ձի նստելով, վերջապէս հասանք Բայալուի հարթավայրը—մեր կօմանդների ձիաւորների ու բնակիչների խմբուած տեղը, ուր արդէն աւազակախումբը բարձրացած Բայալուի լեռան ամենաբարձր կէտը, ամրացել էր քարակառաների մէջ։ Նրանց բռնած կէտից դէպի հիւսիս, մինչև Նոր Բայազէտու գաւառի սահմանները փակել էր ամբողջ սարշարթը պատի նման ձիւնի բարձրութիւնը, դէպի մեր կանգնած հարթն իջնող զառիվայրը դարձել պատած էր ձիւնով։ Մեր մօտից մինչև այնտեղ բարձրանալու հնարք չկար. միայն մի բարակ սև գիծ ձգվում էր. այդ գծով էին նոքա կարողացել վերև հանել իրանց ձիերը, որոնք արդէն սանձարձակ, մի կըրգեակի մէջ (օազիսի պէս) կանգնած էին քարակառակառներում թագնուած աւազակներից մի քիչ հեռու։ Մենք մի քանի անգամ յառաջեցինք խլելու նոցա ձիանքն ու յարձակուել աւազակների վրայ, բայց վերջիններս հրացանների գնդակները յետ կասեցրին մեզ մեր յամառութիւնից։ Հակառակ կողմերից մարդիկ ուղարկեցինք, որպէս զի մի կերպով դրաւեն նոցա դիրքը, բայց ուղարկուողները թաղուելով ձիւնի մէջ, չկարողացան յառաջ գնալ ու ետ յետ դարձան։ Այնուամենայնիւ մի քանի էրտափենցի կտրիճ հայեր, արհամարհելով վտանգը, մօտեցան մի կերպով և հրացանի գնդակի հասանելութեան չափ մի դիրք գրաւեցին։ Այդտեղից կարելի էր շարունակել հրացանաձգութիւնը, բայց զուր էր, որովհետև աւազակախումբը ապաստանած իւր ապահով դիրքի մէջ, արդէն ազատել էր իրան հրացանների գնդակներից, աւելորդ էր համարում մինչև անգամ պատասխանել մեր գնդակներին։ Այդպէս ապարդիւն կերպով պաշարեցինք նոցա կէսօրից մինչև արևի մայր մտնելը։ Այդ միջոցին պ. պրիստաւը երեք տեղ բաժանեց մեր ուժերը, որտեղից գիշերը կարող էին անցնել աւազակները։ Մենք հաստատ համոզուած էինք, թէ աւազակները ձիով չէին կարող երբէք փախչել ձիւնի վերայից, ուրեմն մնում էր նոցա միայն մի ելք, այն է՝ կամ մեռնել այնտեղ ցրտից ու սովից, կամ կատաղի կերպով կռիւ տալով մեզ հետ ճանապարհ բացել և անցնել։ Անձրևը հակառակի պէս մաղում էր, անտանելի քամին հօսառեցնում էր մարդու շունչը։ Գ. պրիստաւը, ես և իմ ընկերը ատամները սեղմելով իրար վրայ կուչում էինք ցրտի, անձրևի ու քամու դէմ և սպասում աւազակների յարձակման ու հրացանների կայծակին։ Գիշերը մութն էր ու բաւականին անցել էր։ Յանկարծ էրտափենցիների դիրքից, ուր աւազակների առջև կտրել էին, արձակուեցին հրացանները իրար հետևից և աղմուկի ձայնը մթութեան մէջ լսելի էր լինում։ Մենք անհամբերութեամբ ուզում էինք թռչել դէպի այն կողմը, բայց հակառակի պէս աղմուկը դադարեց, ընդհատուեց հրացանների ձայնը, հետզհետէ լսում էինք մեր ընկերների խօսակցութիւնը, որոնք եկան շուտով և բերեցին աւազակներից խլած ձիանքը։ Այդ հրացանաձգութիւնը էրտափենցիք այն մտքով էին արել, որ աւազակները չիմանան որ իրանց դիրքը թողել են։ Գ. պրիստաւը հրամայեց, որ իւրաքանչիւր մարդ ելի իւր տեղը բռնէ ու սպասէ աւազակների յարձակման, սակայն էլ ոչ մի ձայն ու ծպտուն չլսուեց։ Լոյսը բացուեց. ամենքս ենթադրում էինք, թէ աւազակները հեռացած կը լինին այնտեղից, այս պատճառաւ մարդ ուղարկեցինք ստուգելու այդ։ Ուղարկածները վերադարձան ու ասացին, թէ աւազակները զրկուելով ձիանքից, թողել են ու փախել դէպի Նոր-Բայազէտու գաւառը, ինչպէս երևում է ձիւնի վրայ թողած հետքից, որ արդէն սառել է և չէ թաղվում մարդ, ուր և անցել էր երկրորդ աւազակախումբը։ Գ. Անդրէասեանցը ամեն կողմ մարդիկ ուղարկեց, հաղորդեց նաև նոցա III մասի պրիստաւին, սակայն հաւատի տեղեկութիւն չստանալով վերադարձանք, բերելով աւազակներից խլած 10 հատ ձիանքը և այլ և այլ իրեր, որոնցից շատը դեռ թագցրել են բնակիչները։ Աւազակախումբը, ինչպէս ասում են, պատկանում է յայտնի աւազակապետ Նաբի Ալմամիդ օղլուն, որ բաղդ ունեցաւ ազատուել շնորհիւ տեղական բնակիչների օգնութեան ու աջակցութեան։ Այս 4—5 տարիներ ընթացքում, շնորհիւ Յ. Յ. գիստանցիօննի նաչալնիկ Ս. Տէր Պօղոսեանի և Անդրէասեանի, Դալաբաղեազում մուտ գործող աւազակը երբէք այդպէս էժան չէր պրծել ու ազատուել մահից։ Տեղիս ոստիկանութիւնը կարգադրած է, որ պ. Տէր-Պօղոսեանը մշտապէս շրջէ գաւառակը և հսկէ աւազակների յարձակմանը, իսկ բոլոր այն մարդկանց, որոնք ուղեցոյց են եղել աւազակներին ու օգնութիւն ցոյց տուել նոցա, ենթարկել դատաստանի։ Զանգեզուրի և Նախիջևանայ գաւառներից լսվում է ամենուրեք աւազակների մասին։

Միքայէլ Տէր-Առաքէլեան

***

ԹԵԼԱՒԻՑ մեզ գրում են.

«Թելաւի խճուղու վրայ բանում էին մինչև այժմ դիլիջան կոչուած կառքերը և վերցնում էին հոգու վրայ Թիֆլիզից թելաւ 4 ռ. 50 կ. իսկ բեռան փթին 80 կոպէկ։ Գ. Եագոր Ոսկանեանցը այս տարի այդ գներն իջեցրեց հոգուն 2 ռ. 50 կոպէկի և փթին 50 կոպէկ, որով մեծ դիւրութիւն եղաւ բնակչաց համար։

Բացի դրանից նոյն պարոնը Թիֆլիզում գնելով 25 վագօն յորեն. ալիւրն սկսեց ծախել աժան գասակարգին փութը, ընտիր հացից, 1 ռ. 50 կոպէկով, մինչդեռ մինչև այժմ սովորական ալիւրի փութը ծախվում էր 1 ռ. 70—80 կոպէկով։

Այսպիսի գործերի համար Թելաւի հասարակութիւնն ամսոյս 2-ին մի մեծածախ հացկերոյթ ունեցաւ Ճանտար կոչուած ծառի տակ ի պատիւ Ոսկանեանցի, ուր ներկայ էին մօտ 90 հոգի։

***

Մայրաքաղաքի լրագրները հաղորդում են, որ կառավարութիւնը մտադրութիւն ունի ամենակարճ ժամանակամիջոցում բանալ չորս բարձրագոյն գիւղատնտեսական դպրոցներ Ռուսաստանի չորս քաղաքներում, այն է՝ Մոսկվա, Վորօնէժ, Կիեվ կամ (Ուման) և Քիշինեվ։

***

1891 թ. ամենայն Հայոց Կաթողիկոսի հրամանով ընտրուած այն եկեղեցական պատգամաւորները, որոնք պէտք է ընտրէին Ներս. դպրոցի համար 12 հոգաբարձու.

I. Վանք.

1) Ա. Մանթաշեան
2) Գ. Արծրունի †
3) Մ. Սալամբէգեան

II. Ս Նշան.

4) Յ. Տէր-Յովհաննիսեան
5) Ս. Մելիք-Ադամեան
6) Գ. Էնիկոլոփեան

III. Ջղրաշէն.

7) Ն. Ամատունի
8) Ս. Արծրունի
9) Բ. Նաւասարդեան

IV. Մողնի

10) Արք. Յովհաննիսեան
11) Գ. Սունդուկեան
12) Իշխ. Կ. Բէհբութեան

V. Լուսաւորիչ.

13) Ս. Սպանդարեան
14) Ա. Մելիք-Այվազեան
15) Երանոսեան

VI. Բեթղեհէմ.

16) Բ. Տէր-Աբրահամեան
17) Մ. Ջմշկեան
18) Ա. Օրբելի

VII. Ջրկինեց.

19) Գ. Իզմայլեան
20) Ն Աթաբէգեան
21) Անանեան բժշ.

VIII. Ս. Կարապետ.

22) Ս. Ղուալեան
23) Ե. Եղիազարեան
24) Մ. Քոչարեան

IX. Կուկիոյ Սուրբ Աստուածածին

25) Ն. Գրիգորեան ճարտ.
26) Լ. Աղունակեան
27) Ի. Աբրահամեան

X. Զաւղուրէթի եկ.

28) Գ. Գրիգորեան
29) Յ. Բաբեան
30) Գ. Տէր-Զաքարեանց

XI. Նորաշէն.

31) Ա. Քշմիշեան
32) Գ. Հաքիմեան
33) Գ. Փրիդոնեան

XII. Էջմիածնեցոց եկ.

34) Յ. Աբովեան
35) Բժ. Վերմիշեան
36) Գ. Յակոբեան

XIII. Կաթ. ս. Գէորգ

37) Լ. Մանուէլեան
38) Դովլաթբէգեան
39 Գ. Բայանդուրեան

XIV. Քարափի եկ.

40) Բժշ. Քուչարեան
41) Ամիրեան
42) Բաբախանեան

XV. Շամքոռեցոց.

43) Թայիրեան
44) Ջումշուտբէգ Հ. Ջալալեան
45) Ա. Ղոնդաղսազեան

XVI. Թանդոյենց եկ.

46) Մուրադեան
47) Տէր-Աստուածատրեանց
48) Գարջօ Առաքելեան

XVII. Քամոյենց.

49) Մելիք Ղարագեօզեան
50) Ս. Սարգսեան †
51) Կիրակոսեան

XVIII. Վերայի եկ.

52) Մ. Աբեղեան
53) Ե. Աղամալեան
54) Ս. Տէր-Գրիգորեան

XIX. Հրեշտակապետ.

55) Յ. Խաչատրեան
56) Ս. Տէր-Մովսիսեան
57) Գ. Միրաղեան

XX. Նաւթլուղ.

58) Մամիկոնեան Արտ.

Ահա Ներ. դպրոցի կանոնադրութեան այն յօդուածը, որ վերաբերում է եկեղեցական պատգամաւորներին.

Յօդ. 12. Ի պակասիլ անդամոց հոգաբարձութեան զտեղի նոցին ունին կանդիդատք (տեղակալք). իսկ ի դէպս պակասելոյ կանդիդատաց, ընտրեն նոր անդամք հոգաբարձութեան ի չէ... [illegible]»։

***

Մենք հրատարակել էինք, որ Քաղաքային Վարկի Ընկերութեան ընդհանուր ժողովը նշանակուած է մայիսի 30-ին. այժմ մեզ հաղորդում են որ այդ ժողովը յետաձգուած է և տեղի կ՚ունենայ յունիսի 6-ին։

***

«Նաշխիր «կուչուած քարածուխի ընկերութիւնը տնօրէն է ընտրել նախկին դեղավաճառ պ. Յարութիւն Տուրինեանին։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՖՐԱՆՍԻԱ.—Ի նկատի ունենալով որ ֆրանսիական թերթերը չափազանց հայրենասիրական եռանդից դիւրաւ կարող են ծայրայեղ գրգիչ յօդուածներով պղտորել Ֆրանսիայի ու Գերմանիայի յարաբերութիւնները, վերջինիս ը տրական շարժման առիթով,—արտաքին գործոց նախարարութիւնը հրաւիրել է մեծ լրագրների խմբագրներին, իսկ մի քանիսի մօտ էլ ուղարկել է իւր պաշտօնեաներին զգուշացնել ամենայն տեսակ ծայրայեղութիւնից։ Բերլինում զինուորական օրինագծի կողմնակիցները կարող են օգտուել ֆրանսիական մամուլի անզգոյշ քայլերից գերմանական զօրքի թիւն աւելացնելու նպատակով ընտրողների վրայ ճընշում գործելու համար։

—Temps լրագիրը, խօսելով ֆրանսիական արտաքին գործոց նախարարի ասած ճառի մասին, որ վերաբերում է եգիպտական խնդրին, պնդում է որ Ֆրանսիայի իրաւունքները փարաւոնների երկրի վրայ հիմնուած են մի շարք բարոյական և նիւթական ծառայութիւնների վրայ, որ Ֆրանսիան մատուցել է Եգիպտոսին։ Բայց պ. Դըվէլը չբաւականա-

---

որ այդ լոյս յառաջացնողը մարդիկ են և հետաքրքրուեց իմանալու թէ ինչ մարդիկ են դրանք։ Զգուշութեամբ ձին առաջ քշեց և մի քանի րոպէում մօտեցաւ լոյսին։ Նա տեսաւ այդտեղ կրակի շուրջը բոլորուած մի ամբողջ ընտանիք, բաղկացած կանանցից, մարդկերանցից, աղջկերանցից և երեխաներից, որոնք տեսնելով իրանց առաջ դրահաւորուած ձիաւոր մարդուն, սարսափահար յետ ու յետ գնացին։

—Մի վախէք, ասաց Դաւիթը ցած թռչելով ձիից, ես ձեր թշնամին չեմ, այլ բարեկամը։

Հասակաւորները դեռ զարմացմամբ դիտում էին Դաւիթին, որ ձին թողնելով արածելու, ինքը մեկնուեցաւ կրակի մօտ և նրանց դառնալով ասաց.

—Ինչպէս երևում է, դուք փախուստ էք տալիս Իւսուֆի զինուորներից. վնաս չկայ, շուտով այդ ժամանակը կ՚անցնի և ամենքդ հանգիստ ձեր տեղերը կըդառնաք։

—Հա՛, ղուրբան լինինք քեզ, մեր գիւղը տակնուվրայ արին այդ անօրէնները և մենք լեռներում ենք ապաստանվում, ասաց ընտանիքի ամենահասակաւորը, որ մօտ վաթսուն տարեկան ժիր տղամարդ էր։

—Ո՞ր գիւղից էք դուք։

—Բերդկունք գիւղից ենք։

—Բերդկունք, ասաց Դաւիթը և նրա սիրտն սկսեց սաստիկ տրոփալ, այդ գիւղը մօտ էր իւր Աստղիկի գիւղին Արծակին։

—Իսկ ինչ տեղեկութիւն ունիք Արծակից, ճանաչում էիք դուք ծերունի Մաթոսին, նրա աղջկան Աստղիկին, ըշտապով հարցրեց Դաւիթը և անհանգստութիւնը տիրեց հոգուն։

—Է՜... բարեկամ, ինչպէս չէի ճանաչում, երկու գիւղն էլ մի քանի ամիս առաջ կործանուեցան, ի՜նչ Մաթոսին իմ աչքերի առաջ սրբինլուայ արին, իսկ թէ յետոյ ուր փախան նրանք, ես չգիտեմ։ Մենք իրարից բաժանուեցինք լեռներում և նա Աստղիկի հետ ուրիշ կողմը գնաց. . .

—Վա՜հ, անօրէններ, ուրեմն նա դեռ կենդանի է և այդ անօրէնների ձեռքում, խօսքը կտրեց Դաւիթը ու վեր թռաւ տեղից։

Խօսակիցը երկիւղից կուչ եկաւ, չհասկանալով թէ ինչ է կատարվում Դաւիթի հետ։

—Ո՞ր կողմը տարան, և ո՞ւր է Աստղիկը, ի սէր Աստուծոյ, ասացէք ինձ, ես նրա նշանածն եմ, Դաւիթ Գնունի, Աշոտ Երկաթի զինուորը։

—Իմ քեռորդի՜ն, գոչեց յանկարծ ծերունին և փաթաթուեցաւ Դաւիթի վզովը։

—Ի՞նչպէս, միթէ դու ես Կարօն, օ՜, ասա, Կարօ ջան, ասա, ո՞ւր է Աստղիկս։

—Ի՞նչ ասեմ, որդիս, թէ ո՞ւր տարան նրան անօրէնները։ Հաւանական է, որ նա մի որ և է արաբ իշխանի սարկուհի լինի դարձած և կամ սպանած լինին նրան. . .

—Ոչ, ես պէտի փնտրեմ նրան, ես պէտի գտնեմ նրան, իսկ եթէ չգտայ, վայ Իւսուֆին, վայ նրա բանակին, կատաղաբար գոչեց Դաւիթը, նորից ձի հեծաւ, մտրակեց նրան և անյայտացաւ խաւարի մէջ. . .

XIII

Սովմ և ծարաւ ուրուրի նման սլանում էր Աշոտ Երկաթ իւր խմբով դէպի առաջ և որս փնտրում... Նա ծարաւի էր արեան, արիւն էր ուզում, անհաւատների արիւն, որ յագեցնէր իւր ծարաւի սիրտը, հանգցնէր վրէժն ու բարկութիւնը... Օ՜... սոսկալի էր նա, զարհուրելի էր նրա վրէժխնդրութիւնը։ Ո՞վ կը դիմանայ սոսկալի մրրկին, ահեղ փոթորկին. նրա աչքերից կրակ ու հուր էր ցայտում, նրա հայեացքից սարեր ու քարեր հալչում... Գնում է նա առաջ, ամպի նման փոշին նրա ձիու սմբակների տակից երկինք է բարձրանում։

Դողում է երկիրը, առուն լռում է, թռչունները երկիւղից պահվում ու դիւցազնին նայում... Գոռում է Աշոտ, սուրը պատեանից հանում և սլանում առաջ։ Այո, նա միշտ իւր հետն է, գիշեր թէ ցերեկ, և նա նայում է իւր առաջ, օդի մէջ և տեսնում է նրան, իւր հօրը։ Սմբատ արքայի թալկացած աչքեր, որոնք դէպի վրէժ են մղում։ Նա նայում է նրանց, նրա մարմինը դողում է, ատամները կրճտացնում է, մազերը փշաքաղվում և ասես մի այնպիսի մանչիւն է արձակում, որ սար ու ձոր դղրդում է, քարերը լեզու են առնում և գոռում՝ «եկմա՜ հա՛ եկմա՜, Աշոտ Երկաթը եկմա՜» լսում են Իւսուֆի իշխաններն ու զինուորները և լեզապատառ լինում, մահուան գունատութիւնը պատում է նրանց դէմքերը... Իւր քաջերով մտնում է նա Վաղարշակերտ, արաբները երկիւղից փախուստ են տալիս, իսկ մի-քանիսը զէնքի վազում։ Աշոտը ժպտում է. դառն և սոսկալի է այդ ժպիտը, որի ազդեցութեան տակ դողում են անհաւատները և սրերը գլորում քաջի ոտքերի տակ և գթութիւն խնդրում։ Բայց չկայ գթութիւն, չկայ թողութիւն, քաջի սիրտը լեռ քարի նման կարծր է ու ամուր, այնտեղ չի շարժվում գութի ոչ մի թել, այնտեղ չի հասնում աղերսանքի և լացի ոչ մի ձայն։ Անզգայ է նա. արի՜ւն, արի՜ւն է ուզում, նրա սիրտը կրակ է ընկած և լափվում է բոցերով, անհաւատների արիւնն ու տանջանքը միայն կըսփոփեն նրան ու կ՚ամոքեն նրա սիրտը...

Թէև նա հրամայում է նոյն տանջանքներով տանջել անհաւատներին, ինչով նրանք տանջել են հայերին և դրանով էլ չբաւականանալով հրամայում է սիկեր շինել նրանց կաշուից և պարսպի վրայ կախել...

Մաքրվում է Բագրևանդի գաւառը անհաւատներից և նա թռչում է Շիրակ։ Այնտեղ էլ հուր և մոխիր է դարձնում, կոտորում, ջնջում Իւսուֆի հրոսակներին... Ապա թռչում է իւր աշխարհի չորս կողմը, աջ ու ձախ մահ սփռում և հալածում թշնամիներին։ Կարճ ժամանակ է անցնում և իւր երկրի բոլոր բերդերն ու քաղաքներն առնում է անօրէնների ձեռքից, թշնամիների հետքն անգամ չթողնելով այնտեղ։

Ազատ շունչ են քաշում հայերը և օրհնում դիւցազնին։ Եկեղեցիների և վանքերի մէջ սկսվում են ժամերգութիւններն ու պատարագը, սրբոց պատկերների լնկարկութիւնն ու շարականների անուշ երգեցողութիւնը...

Բայց Աշոտ դեռ ծարաւի է, վրէժխնդրութեան հուրը դեռ չէ շիջել, նա սլանում է իւր երկրի սահմաններից դուրս դէպի Գուգարաց աշխարհը, որտեղից հալածելով թշնամիներին Գնթունեաց երկու եղբայրներին՝ Վասակին և Աշոտին կառավարիչ է կարգում, ապա սլանում է դէպի Տփխիս, ուր զինուորների մեծ բազմութիւն նախարարների հետ միասին հանգիստ անց էին կացնում իրանց օրերը։

Նախարարներին երկաթէ շղթաներով շղթայելով բանտարկում է, որպէս զի կարողանայ փոխանակել հայոց գերիների հետ ապա դիմում է Ուտի, վերակացու կարգելով քաջ և վիթխարի Մովսէսին ու դառնում է Տաշրաց գաւառը։

Բ. Այվազեանց։

(Կը շարունակուի)

ցաւ Ֆրանսիայի իրաւունքները բարձրաձայն վկայելով, նա համեստ ձեւով, բայց որոշակի ցոյց տուեց իւր գիտաւորութիւնը օգտուել այդ իրաւունքներից անհրաժեշտ բանակցութիւնների համար: Դորանից աւելի լաւ եզրափակութիւն նորա ճառը չէր էլ կարող ունենալ: Ֆրանսիան ցոյց կը տայ Անգլիային, թէ ինքը բնաւ մըտադիր չէ հրաժարուել իւր անհատական ու առանձին իրաւունքից մասնակցելու եգիպտական խնդրի կանոնաւորելուն, իսկ բոլոր աշխարհին կ'ապացուցանէ որ ինքը կամենում է օգտուել այդ իրաւունքից Եգիպտոսի, Բ. Դռան և ամբողջ Եւրոպայի շահերը պաշտպանած լինելու համար:

ԲԵԼԳԻԱ.—Բելգիան էլ է զբաղուած այժմ զինուորական խնդրով: Նոր պատերազմական նախարար գեներալ Բրասսինը Բերնաէրտի նախարարութեան անդամ դառնալու համար մի անհրաժեշտ պայման է դընում, այն է որ կառավարութիւնը համաձայնի զօրքի կազմակերպութիւնը բարեփոխելու համար կազմած իւր ընդարձակ ծրագիրն ընդունել:

Այդ ծրագրի գլխաւոր կէտերը հետեւեալներն են. ընդհանուր զինուորագրութիւն մտցնել, բելգիական զօրքն աւելացնել խաղաղութեան ժամանակ մինչև 300,000 հոգի. մինչև այժմ այդ թիւը հազիւ թէ 130,000, քաղաքացիական պահազօրքը լանդշտուրմ դարձնել, որ թշնամու յարձակման ժամանակ կարող լինի պատերազմի դաշտը հանել մինչև 100,000 զինուոր:

ՍԵՐԲԻԱ.—Nordd. Allg. Zeitung-ն հաղորդում է որ արմատական կուսակցութեան երկպառակութիւնը յառաջացել է արմատականների պարագլուխների անհամաձայնութիւնից Բելգրադի պատգամաւորների վերաբերութեամբ: Փոկիչն ու Պաշիչը առանձին ցուցակներ են ներկայացրել իրանց կուսակցութեանը, ուստի արմատականների ոյժերը բաժանուած են, և այդ հանգամանքից օգտվում են նայրեդնիակները:

—Սուլթանը Թանկագին ընծաներով պատուել է Ալեքսանդր Թագաւորի նամակը Կ. Պոլիս հասցնող Մարկովիչին. այլև ի նշան իւր բարեկամական զգացմանց մի զոյգ արաբական նժոյգ ընծայ է ուղարկել Ալեքսանդր Թագաւորին:

ԲՈՒԼՂԱՐԻԱ. — Բուլղարիայի սահմանադրութեան բարեփոխութեան խնդրի առիթով Times-ն ասում է. «Բուլղարական այժմեան սահմանադրութեան համաձայն Բուլղարիայի առաջին իշխանը կարող է օտարադաւան լինել, իսկ նորա որդիքը կամ յաջորդները անպատճառ պէտք է օրթօդօքս լինին: Բուլղարիայի իրաւաբանները սահմանադրութեան դէմ չեն համարում այն հանգամանքը, որ իշխան Ֆերդինանդը, Բուլղարիայի երկրորդ իշխանը, կաթոլիկ է. այս օրէնքի հակառակ չէ, որովհետև նա նոր հարստութեան առաջին իշխանն է: Բայց իշխանի՝ կաթոլիկ իշխանուհու հետ ամուսնանալը անհրաժեշտ է դարձնում նորա որդոց կաթոլիկ եկեղեցու ոգով դաստիարակուիլը: Բուլղարիայում ոչ մի տեղ այս առաջարկութեան դէմ շարժումն չկայ, և անցեալ դեկտեմբերին այդ առաջարկութեանը հաւանութիւն տուեց ազգային ժողովը գրեթէ միաձայն: Ակներև է որ ազգային հարստութիւն հաստատելու կարևորութիւնը բոլոր միւս շահերից բարձր է դասվում: Իշխանի և իշխանուհու թոռները օրթօդօքս դաւանութեան կըպատկանին:

Պատգամաւորների թիւը պակասեցնելը խնդրի մէջն է: Մինչև այժմ սովորական ժողովի համար պատգամաւոր է ընտրվում 10,000 հոգուց մի մարդ, իսկ մեծ ժողովի 5,000 հոգուց մէկը: Առաջին ժողովի անդամների թիւն է երեք հարիւր, իսկ երկրորդինը մօտաւորապէս վեց հարիւր, այսինքն նոյնքան, որքան և բրիտանական պարլամենտում, թէև Բուլղարիան միայն երեք միլիօն բնակիչ ունի: Այժմ ենթադրութիւն կայ առաջին ժողովի համար ընտրել 20,000-ից 1-ը, իսկ երկրորդի համար 10,000-ից 1-ը, այնպէս որ պակասում այդ ժողովների անդամների միայն կէսը կըմնայ և հաւանականօրէն աւելի բարձր կը լինի նորա կրթութեան աստիճանը:

«ԱՐՁԱԳԱՆՔԻ»

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ

Մայիսի 15-ից.

ԼՈՆԴՈՆ.—Մունդէլն ու Միխայէլը, որ քարեր են ձգել այն գնացքի լուսամուտները, որով գնում էր Գլադստոնը, դատապարտուած են տաժանակիր աշխատանքների 14 օրով, իսկ Միխայէլը բացի դորանից՝ նաև մտրակի 8 հարուածի:

ՏԸՐՆՈՎՕ.—Ազգ. ժող. երկրորդ ընթերցմամբ ընդունեց սահմանադրութեան բարեփոխումը: 38 յօդուածը, որ վերաբերում է ժառանգական իշխանի դաւանութեանը, ընդունուած է միաձայն: Երրորդ ընթերցումը նշանակուած է այսօր:

ՉԻԿԱԳՕ.—Տասնևօթը տէրութիւն վերջնականապէս որոշեցին պարգևների բաշխմանը չմասնակցել, որովհետև իրանց պահանջները մերժուեցան:

Մայիսի 17-ից.

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Մայիսի 15ին Մոսկուայում պատգամաւորութիւնից սուրբ պատկեր ընդունելով՝ Թագաւոր Կայսրն ասաց քաղաքագլխին. «Շնորհակալ եմ ձեզանից և սիրով ընդունում եմ ձեր օրհնութիւնը. ճիշդ ինչպէս դուք ասացիք, ինձ պէտք է Աստուծոյ օրհնութիւնը: Ես շատ ուրախ եմ որ այս օրն անց եմ կացնում Մոսկուայում: Կրկին շատ շնորհակալ եմ ձեզանից:» Ազնուականութեան պարագլխին Թագաւորն ասաց. «Շնորհակալ եմ ձեզանից, պարոններ, ձեր օրհնութեան համար և ընդունում եմ այդ: Այս տասը տարին անփորձ անցաւ և յոյս ունիմ, որ Աստուծոյ օգնութեամբ այսպէս կը լինի նաև այսուհետև: Յայտնեցէք իմ և Կայսրուհու շնորհակալութիւնը Մոսկուայի ազնուականութեանը:»

ՀԱՆՔԱՅԻՆ ՋՐԵՐ (Միներալնիա վոդի-կայարան).— Ժամանակաւորապէս գնացքների երթևեկութիւն է սկսուած հանքային ջրերի ճիւղի վրայ (Վլադիկաւկազի երկաթուղի) մինչև Խասեթուկ. շուտով, Պոդկումօկի կամուրջի կառուցումը վերջացնելուց յետոյ, կըսկսուի երթևեկութիւն մինչև Կիսլովոդսկ:

ՋԱՆԱԶԱՆ

Աշխարհահռչակ պրոֆեսոր Վերխովը անցեալ տարուայ սովի ժամանակ լինելով Մոսկուայում՝ անդրոպօլօգիական կոնգրէսին մասնակցելու համար, վերադարձին իւր հետ տարաւ Բերլին իբրև նմուշ «սովեալ հացը»: Այսպէս է կոչվում այն հիւթը, որ ռուսաց ամենաաղքատ գիւղացիք գործ էին ածում անցեալ սովի ժամանակ: Այս հացը սպատրաստվում է շատ քնքուշ սերմերից, որ տալիս է մի տեսակ խոտ (chenopodium), որ մեծ քանակութեամբ բուսնում է դաշտերում: Այս սերմերից ստացվում է սև բաղադրութիւն: Այժմ «Globus» գերմանական ամսագիրը հաղորդում է, որ պրոֆ. Վիրխովը ռուսական «սովեալ հացը» յանձնել է Բերլինի անտրօպօլօգիական ընկերութեան քննութեանը, որ և տուել է անսպասելի հետևանք: Քիմիական վերլուծութիւնից երևացել է, որ այդ հացը իւր մէջ պարունակում է աւելի սպիտակուց (բելկովինա) և ճարպ, քան թէ «րօժի» սև հացը, հետևաբար «սովեալ հացը» աւելի սննդարար է, քան թէ «րօժի» հացը:

Խմբագիր-հրատարակիչ՝
ԱԲԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրօնցովի արձանի հանդէպ) Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիւրակի օրերից:

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան (և ատամնացաւի) և վեներական (սիֆիլիս) ցաւերի:
Կ. Մ. ՁԻԿՕՂԱՆԻ—9—10 ժ. աչքի և նեարդային ց.
Դ. Գ. ՐՈՒԴԿՈՎՍԿԻ—10—11 ժ. ներքին, երեխայոց և կանանց ց.
Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—$11\frac{1}{4}$—$12\frac{1}{2}$ ժ. ականջի, կոկորդի և քթի ց.
Մ. Զ. ՔԱՆԱՆԵԱՆ—$12\frac{1}{4}$—1 ժ. մանկաբարձական և կանանց ց.
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—$1\frac{1}{2}$ ժ. ներքին և երեխայոց ց.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—5-6 ժ. երեխայոց և ներքին ց.
Ի. Վ. ՁԵՊՈՒՐԿՈՎՍԿԻ—5—6 ժ. աչքի և կրծքի ց., Քիմիա-խոշորացուցական հետազօտութիւն խխի և մէզի:
Ա. Ա. ԳԱԴՕՄՍԿԻ—6—7 ժ. սիֆիլիսի (և մորթու) և վիրաբուժութեան:
Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ—7—$7\frac{1}{2}$ ժ.
Ի. Ե. ՑՐԱՆՑԻՈՒՍ—7—$7\frac{1}{4}$ ժ. ականջի, կոկորդի, քթի և նեարդային ց. (էլեքտրաբուժութիւն և մարզումն):
Վճար—50 կ.: Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Նախասարդեան:

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Մարդատար գնացքը Թիֆլիզից Բաթում դուրս է գնում առաւօտեան ժ. 9-ին 30 ր. և Բաթում հասնում է երեկոյեան ժ. 9-ին 45 ր.:

Փոստային գնացքը Թիֆլիզից Բագու դուրս է գնում ցերեկուայ ժ. 1-ին 20 ր., և հասնում է Բագու առաւօտեան 7 ժ. 30 ր.:

Փոստային գնացքը Թիֆլիզից Բաթում դուրս է գնում երեկոյեան ժ. 6-ին 50 ր. և Բաթում հասնում է առաւօտեան ժ. 8-ին 15 ր.:

Մարդատար գնացքը Բաթումից Թիֆլիզ դուրս է գալիս առաւօտեան ժ. 9-ին 45 ր. և Թիֆլիզ հասնում է երեկոյեան ժ. 9-ին 52 ր.:

Փոստային գնացքը Բաթումից Թիֆլիզ դուրս է գնում գիշերուայ ժ. 11-ին 25 ր. և Թիֆլիզ է հասնում ցերեկուայ ժ. 12-ին 25 ր.:

Փոստային գնացքը Բագուից Թիֆլիզ դուրս է գալիս գիշերուայ ժ. 11-ին 10 ր. և Թիֆլիզ հասնում է ցերեկուայ ժ. 5-ին 50 ր.:

ՓՕՍՏԱՅԻՆ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆԸ
ՎՐԱՑ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ

Թիֆլիզից՝ հինգ հոգու տեղ ունեցող կառքը ուղևորվում է առաւօտեան 8 ժամին, գիշերում է Մլեթի կայարանում. Վլադիկավկազ է հասնում հետևեալ օրը ժամը 7—8-ին երեկոյեան:

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) ուղևորվում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և առանց գիշերելու տեղ է հասնում հետևեալ օրը ժամը 7—8-ին երեկոյեան:

Վլադիկավկազից՝ հինգ հոգու տեղ ունեցող կառքը ուղևորվում է առաւօտեան ժամը 8-ին, գիշերում է Մլեթի կայարանում. Թիֆլիզ է հասնում հետևեալ օրը ժամը 7—8-ին երեկոյեան:

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) ուղևորվում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և առանց գիշերելու տեղ է հասնում հետևեալ օրը ժամը 7—8-ին երեկոյեան:

Երկաթուղու փոստային - մարդատար Վլադիկավկազից դուրս է գալիս դէպի Ռոստով առաւօտեան 10 ժ. և 30 ր.:

ՌՈՒՍԱՑ ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ամեն շաբաթ շոգենաւերի երթևեկութիւն Բաթումի, Օդեսայի և Կ. Պոլսի միջև:

Բաթումից դուրս է գնում.

Շաբաթ օրերը, (լոյս կիրակի գիշերուան 2 ժ.) շրջանառու ընթացքով բոլոր նաւահանգիստները:

Չորեքշաբթի օրերը, գիշերուայ ժամը $11\frac{1}{2}$-ին, խուճապ ընթացքով Սևաստոպոլի վրայով:

Հինգշաբթի օրերը, ցերեկուայ ժամը 4-ին Նովօրոսիյսկի Կերչի վրայով:

Բաթումից է հասնում.

Երկուշաբթի օրերը երեկոյեան, շրջանառու ընթացքով բոլոր նաւահանգիստների վրայով:

Երեքշաբթի օրերը առաւօտեան, ուղիղ ընթացքով Սևաստոպոլի վրայով:

Ուրբաթ օրերը առաւօտեան ուղիղ ընթացքով Նովօրոսիյսկի և Կերչի վրայով:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ Է
ԱՇՈՏ ԵՐԿԱԹ
ՊԱՏՄԱԿԱՆ ՎԷՊ 10-ՐԴ ԴԱՐՈՒ
Հեղինակութիւն
ԲԱԳՐԱՏ ԱՅՎԱԶԵԱՆՑԻ
Վաղօրօք ցանկացողները պէտք դիմեն Թիֆլիզ «Կենդրոնական գրավաճառանոցին»:
Գինն է ճան. ծախքով 1 ռ. 25 կ.:
(Խ) (10—1)

ՀԱՐԿԱՒՈՐ Է ԼԱՒ ՁԱՅՆՈՎ ՀՄՈՒՏ
ՏԻՐԱՑՈՒ
տարեկան 5—600 ռ. արդիւնքով.
Ցանկացողները կարող են դիմել՝ Екатеринодаръ
Ктитору О. Башмакову.
(90) (6—3)

Էջմիածնի Հայոց Սինոդի ատենի մէջ նշանակած է աճուրդ վարձով տալու համար ամենատեսակ արդիւնքը Ս. Էջմիածնի Աթոռին պատկանեալ գիւղերի, այն է՝ Վաղարշապատի 20 և 22 Մայիսի տարւոյս, Օշականի և Մուղնւոյ 26 և 29 նոյն ամսոյ. Եղուարդի և Մաստարու 3 և 5 յունիսի. և Բջնւոյ 8 և 10 նոյն ամսոյ:
Անդամ Կոնսիստորիայի
Գաբրիէլ քհն. Տէր-Գաբրիէլեան:
(87) (3—3)
Կ. Կ. և Հ.

ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ ԴԱՍԵՐ
ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ցանկանում է հայերէն լեզուի դասեր ունենալ ընտանիքներում:
Պատրաստում է աշակերտներ՝ ռէալական, գիմնազիոնի և Ներսիսեան դպրանոցների ստորին դասարանների համար:
Դիմել «Արձագանքի» խմբագրութեան:
(Խ.) (10—9)

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
և վաճառվում է կենդրոնական գրավաճառանոցում
Իշխ. Կ. Բէհբութեանցի
ԾՈՒԽ
(ծխական հոգաբարձութեան կազմակերպութեան մասին) գրքոյկը Օրէնքի քաղուածներով հայերէն և ռուսերէն:
Գինն է 15 կ. գումարով զիջումն:
(Խ) (25—11)

ԱՂՍՏԱՓԱ ԿԱՅԱՐԱՆՈՒՄ
ԱՂԵՔՍԱՆԴՐ ՄԱՄԻԿՈՆԵԱՆՑԸ
ընդունում է և ուղարկում ամեն տեսակ ապրանքներ զանազան տեղեր. նոյնպէս յանձնարարութեամբ գնում է և վաճառում Աղստաֆայում զանազան ապրանքներ: Կոմիսիան սովորականից չափաւոր. մեծ քանակութեամբ ուղարկուելիք ապրանքների համար առանձին պայման:
Այն պարոնները, որոնք Թիֆլիզի կայարանում (Товарная станція) սեփական գործակալ չունին, կարող են դիմել Մովսէս Մսերեանցին, Ձաղինովի քարվանսարէն №-7, իսկ պայմանների համար ինձ Աղստաֆայում:
(88) (10-3)

Գ. ԶՈՒԴԵՐՄԱՆ
„ՊԱՏԻՒ"
Կոմ. 4 գործ.
Թարգմ. Ա. Թարխանեանի.
ԳԻՆՆ Է 60 Կ.
Վաճառվում է «Կենդրոնական գրավաճառանոցում»
(61) (5—4)

Սեպտեմբերի 1-ից Երևանեան հրապարակի վրայ, քաղաքային տանը, դեղավաճառանոցին կից
ԲԱՑՈՒԱԾ Է
ԴԵՂԱՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ ՆԻՒԹԵՐԻ ՊԱՀԵՍՏ
Մ. Ի. ԱԳՄՈՒՐՕՎԻ
(78) (100—62)

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
ՎԵՐԱԾՆՈՒԹԵԱՆ ԴԱՐ
Ն. ՏԷՐ-ԱՒԵՏԻՔԵԱՆԻ
ԳԻՆՆ Է 1 Ռ.
Յարմար է ընծայ տալու աւարտող աշակերտներին:
Ծախվում է բացառապէս Թիֆլիզ Կենդրոնական Գրավաճառանոցում:
Մինչև մայիսի 1-ը լոյս կը տեսնի նոյնի «ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ ՁԵՐՆՕՏՕՐԻԱՅՈՒՄ» և «ԿՈՎԿԱՍԵԱՆ ՀԱՆՔԱՅԻՆ ՋՐԵՐ»:
(4—3)

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏՈՒԱԾ
ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՄԱՆ
ՋՈՒՐ ՆԵՐԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ
անվնաս, գոյնզգոյն մածուցիկ հատիկներով, նոյնպէս և փոշի և հեղուկ դրութեամբ, վայրկենաբար ներկելու հրահանգի համեմատ:
ՋԱՏԿԱԿԱՆ ԻՒՂԱՀԱՅԵՐԻ ԵՒ ԱՌՏՆԻՆ ՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ
Վանիլ, զաֆրան, կարդամոն, ջալփ և տերև, քաղցր և դառը նուշ, լիմօնի և վարդի իւղ, պօմերանցովի և վարդի ջուր և այլն:
(118) (50—45)

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
«ԲՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ» ՓՕՍԹԷՐԻ, ՆԿԱՐՆԵՐՈՎ,
Թարգմանութեամբ Գրիգորիս Երզնկեանցի. վաճառվում է Թարգմանչի մօտ և կենդրոնական գրավաճառանոցում:
Գինը 50 կոպէկ. ԶԵՂՉՈՒՄՆ ՍՈՎՈՐԱԿԱՆ:
(Խ) (2—1)

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
ԱՆԴՐՈՆԻԿ ԿՈՄՆԷՆ
ՊԱՏՄԱԿԱՆ ՎԷՊ
ԹԱՐԳՄ. Կ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑ
ԳԻՆՆ Է 50 ԿՈՊ.
Վաճառվում է Թարգմանչի մօտ, Յ. Մարտիրոսեանցի տպարանում: Օտարաքաղաքացիք դիմելու են հետևեալ հասցէով. Тифлисъ, Типографія И. Мартиросіанца.

ՓԻԼԻՊՊՈՍ ՎԱՐԴԱՆԵԱՆԻ

ՀՐԱՏԱՐԱԿԱԾ ԳՐՔԵՐԸ	Ռ. Կ.
1) Շմիդտ, «Ֆրանկլին», 2 տպ. ռակաւաթիւ.	— 40
2) » «Վաշինգտոն», 2 տպ.	— 60
3) » «Հոմերի Իլիականը», պատկերներով	1 —
4) » «Հոմերի Ոդիսականը»	1 20
5) Սմայլս, «Բնաւորութիւն»	1 50
6) Ամիչիս, «Սիրտ»	1 —
7) » «Ապէնիններից մինչև Անդերը».	— 10
8) «Ռուստէմ և Զօհրաբ»	— 20
9) Շիլլէր, «Աւազակներ», ողբերգութիւն	— 50
10) Սմայլս, «Ինքնօգնութիւն»	1 50
11) Տօլստոյ, «Ռոբինզօն», փոքրերի համար.	— 20
12) » «Կօլումբը», փոքրերի համար	— 15
13) Հայնէ, «Բէաթրիչէ», վէպիկ	— 30
14) » «Նօնցայի բերդը», վէպիկ.	— 30
15) Շմիդտ, «Ռէյնեկէ աղուէսը»	— 60
16) Վալտնէր, «Հաւատարիմ Սավլտրին» *).	— 10

Ճանապարհածախսը Թարգմանչի վրայ է: Վաճառվում են Թարգմանչի մօտ՝ Тифлисъ, Садовая, Маріино-Анановское училище, և կենդրոնական գրավաճառանոցում:

*) Հրատարակութիւն «Թ. Հ. Գր. Հրատարակչ. Ընկերութեան: